

2018 թվականի մարտի 13-ին, Թբիլիսիի քաղաքային դատարանում„ դատավոր Նանա Դարասելիայի նախագահությամբ, տեղի ունեցավ Վիրահայոց թեմի կողմից Հանրային Ռեեստրի ազգային գործակալության դեմ ընթացող վեճի շրջանակներում առաջին դատական նիստը:

Դատական նիստին ներկայացել էին ինչպես հայցվոր կողմը՝ այս պարագայում Վիրահայոց թեմը՝ ի դեմս առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և Հանրային Ռեեստրի ազգային գործակալությունից լիազորված անձինք:

Որպես երրորդ կողմ ներկայացել էր Վրաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքարանը:



Վիրահայոց թեմը գտնում է, որ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ «Թանդոյանց Սուրբ Աստվածածին» հայոց եկեղեցին փոխանցելով Վրաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքարանին, Վրաստանի հանրային ռեեստրը խախտել է Վիրահայոց թեմի շահերը՝ չուսումնասիրելով եկեղեցու ծագումը, նրա պատմությունը և եկեղեցու նկատմամբ թեմի ունեցած պահանջը:

Գործի Վարչական իրավական վարույթին, որպես երրորդ կողմ այսօր ընդգրկվեց նաև էկոնոմիկայի նախարարության գույքի կառավարման ազգային գործակալությունը, որը Թանդոյանց եկեղեցին և դրան կցված հողակալվածքը, առանց որևէ հիմնավորման, պետության հաշվեկշից օտարել է՝այդպիսով հեշտացնելով հայոց եկեղեցին Պատրիարքարանի հաշվեկշռին փոխանցելու գործը:



